ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՀ, ք. Երևան, 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (+ 374 10) 44-34-80, (+ 374 60) 37-26-56
Հեռ.՝ (+ 374 10) 44-29-04, (+ 374 60) 37-77-37

Ե 40/11-5730
«20» 08 2025 թ.

«ԱՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ» ԱՁ-ի ՏՆՕՐԵՆ՝
ՏԻԿԻՆ ԱՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ
ՀՀ, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք,
գյուղ Պտղունք, Թաումանյան փողոց, տուն 5
ՀՎՀՀ 26692443
հեռախոս 033 338 858
էլ.հասցեն՝ artakkarapetyan928@gmail.com

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱՆ ՔԿ ծառայություն) և «ԱՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ» ԱՁ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 08.04.2025թ.-ին՝ կնքվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/31-4» ծածկագրով գնման պայմանագիր (Այսուհետև՝ Պայմանագիր)՝ «ՀՀ ԱՆ ՔԿ ծառայության կարիքների համար ապրանքներ մատակարարելու վերաբերյալ», որի ընդհանուր գումարը կազմել է՝ 380.000 ՀՀ դրամ:

Հարկ եմ համարում տեղեկացնել, որ Պայմանագրի կատարման ընթացքում Կատարողի կողմից թույլ են տրվել պայմանագրի պարտադիր պայմանի խախտում, մասնավորապես. ըստ պայմանագրի՝ «ԱՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ» ԱՁ-ն պարտավորվել է, մինչև 2025թ.-ի մայիսի 26-ը, մատակարարել գրասեղան 20 հատ, որի ընդհանուր գումարը կազմում է **380.000 ՀՀ դրամ:**

30.07.2025թ.-ին գրությամբ «ԱՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ» ԱՁ-ին տեղեկացվել է առ այն, որ վերը նշված ապրանքը ՀՀ ԱՆ ՔԿ ծառայությանը անհրաժեշտ է պայմանագրով սահմանված ժամկետներում և առաջարկվել է սեղմ ժամկետում՝ տալ

պարզաբանում և մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքը, սակայն «ԱՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ» ԱՁ-ն ուղարկված գրությանն արձագանք չի տրվել:

Արդյունքում՝ «ԱՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ» ԱՁ-ի կողմից թույլ է տրվել պայմանագրային պարտավորությունների խախտում՝ խախտվել է ապրանքների մատակարարման ժամանակացույցն, ուստի ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը՝ ՀՀ ԱՆ ՔԿ ծառայությունը **2025թ.-ի օգոստոսի 20-ին, միակողմանի ամբողջությամբ լուծում է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «ԱՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ» ԱՁ-ի միջև 08.04.2025թ.-ին կնքված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/31-4» ծածկագրով պայմանագիրը՝ 380.000 (երեք հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամի չափով,** ինչպես նաև պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Տեղեկացնում եմ, որ «ԱՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ» ԱՁ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո հինգ բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900001008375 հաշվեհամարին փոխանցել **16.530 ՀՀ դրամ**՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 20.08.2025թ. և **1.900 ՀՀ դրամ**՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն):

Համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջների՝ «ԱՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ» ԱՁ-ն, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, պետք է ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե Վաճառողը չի վճարում պայմանագրի և որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է **120.000 (հարյուր քսան հազար) ՀՀ դրամ**, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է **180.000 (հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ**, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև **2025թ.-ի օգոստոսի 29-ը** ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված **120.000 ՀՀ դրամ՝** պայմանագրի կատարման ապահովման և **180.000 ՀՀ դրամ՝** որակավորման ապահովման գումարները, ընդհանուր **300.000 ՀՀ դրամն**, ապա «ԱՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ» ԱՁ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները, ինչպես նաև տույժի և տուգանքի վճարված կտրոնների բնօրինակները, մինչև **2025թ.-ի օգոստոսի 29-ը** ներառյալ, ներկայացնել ՀՀ ԱՆ ՔԿ ծառայության կենտրոնական մարմին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ՏԻԳՐԱՆ ԻԳԻԹՅԱՆ**

Կատարող՝ Տիրան Խաչատրյան,
ՀՀ ԱՆ ՔԿԾ ՆՏԱ բաժին,
Հեռ.՝ 060-37-12-80: